

ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտ
ԳԵՂԱՄ ԱՍԱՏՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԽԱՉՔԱՐԵՐԸ (IX-XI դդ.)

Բանալի բառեր՝ Աստվածաշունչ, Ավագ, Հին Կտակարան, Ծննդոց գիրք, Ադամ, Եվա, Մովսես, դրախտ, օձ, գավազան, պատկերագրություն:

Մուտք

ՀՀ Կոտայքի մարզկենտրոն Հրազդան քաղաքում գտնվող Մաքրավանքի համալիրի տարածքում կան տարբեր դարերի բազմաթիվ խաչքարեր: Այդ խաչքարերի մի մասին արդեն անդրադարձել ենք հրատարակված աշխատանքներով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Մաքրավանքի համալիրի վաղ շրջանի՝ IX-XI դդ. խաչքարերին¹ և միանավ եկեղեցու դիմաց կողք կողքի կանգնեցված՝ 1259 թվականի երկու խաչքարերին²: IX-XI դդ. խաչքարերին նվիրված աշխատանքում, մասնավորապես, անդրադարձել ենք վանական համալիրում եղած այդ շրջանի բազմաթիվ խաչքարերի, դրանց հորինվածքային առանձնահատկությունների, փորձել ենք դասակարգել դրանք:

2018 թվականին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ Ավետիս Գրիգորյան) իրականացվող վերականգնման և բարեկարգման աշխատանքներին նախընթաց, պեղումներ կատարեց համալիրում: Պեղման-մաքրման հիմնական աշխատանքները կատարվեցին գավթի ներսույթում, զույգ եկեղեցիների և գավթի շրջակայքում: Բազմաթիվ հնագիտական գտածոների շարքում հայտնաբերվեցին նաև տարբեր դարերով թվագրվող տասնյակ տապանաքարեր ու խաչքարեր: Գտնված ստեղծագործություններից շուրջ երեք տասնյակը գրեթե ամբողջական խաչքարեր են, հիսունից ավելին՝ խաչքարերի բեկորներ: Մաքրավանքում իրականացված պեղումներն ուղազրավ արդյունքներ գրանցեցին գտնված խաչքարերի և տապանաքարերի,

¹ Գ. Ասատրյան, «9-11-րդ դդ. խաչաբերը Մաքրավանքում», *Վէմ* № 2 (62), 2018, էջ 155-164:

² Գ. Ասատրյան, «Մաքրավանքի՝ 1259 թվականի երկու խաչաբերի հորինվածքային առանձնահատկությունները» (տպագրման ընթացքում է):

դրանց արձանագրությունների, պատկերագրության, ոճական և ժամանակագրական բազմազանությունները: Մասնավորապես, համալիրի խաչքարերի և տապանաքարերի հավաքածուն համալրվեց ևս 30 խաչքարով և 83 տապանաքարով: Պեղումների արդյունքում հայտնաբերվեցին նաև խաչքարերի շուրջ 52 բեկոր, 14 պատվանդան, 13 արձանագրություն, որից 4-ը՝ խաչքարային:

Նորահայտ խաչքարերը, ժամանակագրական առումով, ընդգրկում են X-XVII դդ., իսկ տապանաքարերը՝ ընդհուպ մինչև XX դ.: Հաշվի առնելով վերոնշյալը, գտնված նմուշների ոճական և հորինվածքային բազմազանությունը, ինչպես նաև շատ դեպքերում, հավանական շփոթել ոչ արձանագիր խաչքարերի դեպքում, ստորև կանդրադառնանք հայտնաբերված խաչքարերից վաղ շրջանի (IX-XI դդ.) նմուշներին՝ փորձելով ներկայացնել դրանց առանձնահատկությունները և հնարավորության դեպքում, համեմատություն անցկացնել մինչև պեղումները համալիրում եղած նույն շրջանի աշխատանքների հետ:

Խաչքարերի ձևավորման ընթացքը

Մինչև Մաքրավանքում պեղումների մեկնարկը, խաչքարերը սփռված էին համալիրի շուրջը լորը: Միայն եկեղեցու արևելյան կողմում դրանց թիվը շուրջ մեկուկես տասնյակ էր: Նկատելի էին ինչպես տեղում կանգնեցված, այնպես էլ այլ հատվածներից գտնված խաչքարերի կտորներ, որոշները՝ պահպանված նվազագույն աստիճանի³: Համաձայն տարբեր փաստաթղթային ցուցակների՝ համալիրի խաչքարերը հիմնականում պատկանում են IX-XV դարերին, սակայն ինչպես արդեն նշել ենք, IX դ. օրինակներն այստեղ դժվար թե բազմաքանակ լինեն⁴: Մեր կարծիքով՝ Մաքրավանքում առաջին խաչքարերը պետք է լինեն առնվազն համալիրի առաջին կառույցին համաժամանակյա, այն է՝ սկսած X դ.: Մի կողմից այս, մյուս կողմից՝ պարզությունամբ աչքի ընկնող խաչքարերի նվազագույն քանակը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ համալիրում վաղագույն խաչքարերի մեծ քանակն առնչվում է առավելապես X դ. հետ: Ուսումնասիրողները IX-X դդ. խաչքարերի ճարտարապետական տեսքի և հորինվածքի ձևավորման փուլն են համարում: Ոճական առումով դրանց հիմնականում բնորոշ է քանդակի ընդգծված կոթողայնությունը⁵: Ու թեև խաչքարերի զարգացման IX-X դդ. և ավարտական XVI-XVII դդ. աշխատանքների ճարտարապետական ձևերն ու գեղարվեստական հորինվածքներն ամենուր գրեթե միանման են, և

³ Գ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 156:

⁴ Նույն տեղում:

⁵ Հ. Պետրոսյան, *Խաչքար*, Երևան, 2015, էջ 14-15:

միայն XII դ. են խաչքարերը ստանում վառ արտահայտված առանձնահատկությունները⁶, այդուամենայնիվ, ձեռքի տակ ունենալով մինչև պեղումները համալիրում եղած նույն շրջանի խաչքարերին նվիրված ուսումնասիրությունները՝ փորձենք առանձնացնել Մաքրավանքի նորահայտ խաչքարերից առավել աչքի ընկնողները և ոճական որոշակի առանձնահատկություններ ունեցողները:

IX-XI դդ. խաչքարերը

Մաքրավանքի նորահայտ խաչքարերից ուշագրավ են վանքի պատմության առաջին շրջանի՝ IX-XI դդ. նմուշները, որոնք իրենց պատկերագրություններ և քարի մշակման տեխնիկայով կրկնում են համալիրի համաժամանակյա մյուս խաչքարերի ոճական առանձնահատկությունները և կրում Հայաստանի միջնադարյան խաչքարային արվեստում գերակշռող արտահայտչաձևերի և իմաստաբանական պատկերացումների դրոշմը: Դրանք՝ թվով երկու տասնյակից ավելի են և համալրում են Մաքրավանքում մինչ այդ եղած IX-XI դդ. մեկ տասնյակից ավելի խաչքարերի շարքը: Նորահայտ աշխատանքների շարքում կան ինչպես խաչքարերի զարգացման ընդհանուր համատեքստին բնորոշ վաղ շրջանի (IX-XI դդ.) միանման և ոչ փորձառու վապետների ձեռքով կերտված, այնպես էլ XII դ. սկսած՝ վառ արտահայտված, տեղային առանձնահատկություններ ունեցող եզակի աշխատանքներ: Մաքրավանքի IX-XI դդ. նորահայտ խաչքարերը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի տիպի՝

- 1) IX դ. վերջ-X դ. սկզբի աշխատանքներ, որոնց հիմնականում բնորոշ է միանմանությունը, հորինվածի պարզությունն ու անմշակությունը
- 2) հիմնականում X դ. խաչքարեր, որոնք, ի տարբերություն նախորդների, առավել մշակված են և աղեսներ ունեն Կոտայք-Արագածոտնում առանձնացվող համաժամանակյա այլ ստեղծագործությունների հետ և կարող են դասվել դրանց շարքին
- 3) ավելի ուշ շրջանի՝ X դ. վերջ-XI դ. սկզբի խաչքարեր, որոնք արդեն հարստանում են բուսական տարրերով և առաջին իսկ հայացքից տարբերվում նախորդ երկու տիպերից:

1-ին տիպ: Այս շարքի խաչքարերը համեմատաբար պարզ և անմշակ ստեղծագործություններ են (**նկ. 1, նկ. 2, նկ. 3**), որոնց հիմնականում բնորոշ են փոքր չափերը: Դրանք աչքի չեն ընկնում կատարողական բարձր վարպետու-

⁶ **Т. Варданесова**, *Культура хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв.*, Ереван, 2016, с. 155.

թյամբ: Այս շարքի խաչքարերի դեպքում շատ հաճախ գործ ունենք ոչ թե առանձին ստեղծագործությունների հետ, այլ խաչքարերի, «որոնց ստեղծման համար օգտագործվել են խաչաչին հորինվածքը փորագրելու համար համապատասխան մակերես ունեցող կոթողները, սալերը, շինաքարերը և այլն»⁷: Սրանց դեպքում օգտագործվել են բնական կամ «մշակութայնացված» քարեր⁸: Թեև այս շրջանի աշխատանքները հիմնականում նման են իրար, այդուհանդերձ, չենք կարող շառանձնացնել դրանցից մեկը (նկ. 3, չափերը՝ 28 × 75սմ) ցույց տալով ոճական նմանությունը Կատրանիդե թագուհու 879 թ. խաչքարի հետ (նկ. 4): Կարող ենք ենթադրել, որ նշյալ խաչքարն էլ կարող է թվագրվել IX դ. վերջով և դասվել Մաքրավանքի հնագույն խաչքարերի շարքին: Դրանց մասին առավել հանգամանալից կխոսենք ստորև:

2-րդ տիպ: Խաչքարերի զարգացման ընդհանուր համատեքստին բնորոշ վաղ շրջանի (IX-XI դդ.) աշխատանքներից հատկապես ուշագրավ են գավթի պեղումներից գտնված երկու խաչքարերը (նկ. 5, նկ. 6): Սրանք, ըստ երևույթին, IX-X դդ. գործեր են: Համենայն դեպս, բացի հորինվածքային նմանություններից՝ այդ մասին են վկայում նաև խաչքարերի գրեթե հավասար չափերը՝ 46 × 78 սմ և 47 × 53 սմ: Հաշվի առնելով առաջին խաչքարի ստորին հատվածի կոտրված լինելը՝ կարելի է ենթադրել, որ երկրորդ խաչքարը ևս ունեցել է մոտ 70 սմ բարձրություն: Երկուսն էլ մոխրագույն բազալտից են: Թեպետ խաչքարերը վաղ շրջանի են, ու համեմատաբար անմշակ է քարի խորքը, այդուամենայնիվ, վառպետները խաչի հորինվածքին հետաքրքիր լուծումներ են տվել: Առաջին խաչքարի դեպքում և՛ կենտրոնական խաչի, և՛ ստորին երկու խաչերի թևերն ավարտվում են նույն կերպ: Գրեթե նույնանման է երկրորդ խաչքարի թևերի ավարտը, սակայն այս դեպքում բացակայում են ստորին մշակված խաչերը:

Նշյալ երկու խաչքարերի քննության առիթով հարկ է անդրադառնալ մասնագիտական գրականության մեջ երկու հարևան մարզերում՝ Կոտայքում և Արագածոտնում առանձնացվող IX-X դդ. խաչքարերի շարքին: Դրանցից են Կատրանիդե թագուհու 879 թ. (նկ. 4), Թալինի 882 թ. և 975 թ., Արուճի 973 թ. ու Մուղնու 986 թ. (նկ. 7) խաչքարերը, ինչպես նաև Գառնու հնագույն գերեզմանոցից գտնված և IX-X դդ. թվագրվող ևս մեկ խաչքար (նկ. 8)⁹: Այդ շարքին նախկինում ավելացրել էինք Մաքրավանքի IX-X դդ. ևս մեկ խաչքար (նկ. 9)¹⁰: Մաքրավանքի նորահայտ խաչքարերից վերը առանձնացված երկուսը իրենց

⁷ Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2007, էջ 81-82:

⁸ Նույն տեղում:

⁹ Т. Варданесова, там же, с. 26.

¹⁰ Գ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 158:

հորինվածքային լուծումներով բավական նման են վերոնշյալ շարքի խաչքարերին և հատկապես Մաքրավանքի նշված աշխատանքին (նկ. 9): Իսկ նորահայտ խաչքարերից երկրորդը (նկ. 6) գրեթե ամբողջապես նույնական է վերջինիս հետ (նկ. 9): Ուստի, կարծում ենք՝ չկա որևէ կաշկանդող հանգամանք՝ նշյալ երկու գործերը ևս դասելու գրականության մեջ առանձնացված այդ շարքին:

Երկրորդ տիպի խաչքարերի շարքին կարելի է դասել նաև ավելի մշակված և ընդհուպ մինչև X դ. վերջի խաչքարեր հիշեցնող այլ նմուշներ ևս (նկ. 10, նկ. 11, նկ. 12, նկ. 13): Այս խաչքարերը և հատկապես դրանց կենտրոնական խաչերի թևերը մշակված են և ունեն խաչի թևերի հետաքրքիր ավարտ: Այս շարքի շորս խաչքարերը, ինչպես մյուս գրեթե բոլոր դեպքերում, մոխրագույն բազալտից են, իսկ կենտրոնական խաչի ստորին կողքերին փոքրիկ խաչեր կան: Դրանցից երկուսը (նկ. 11, նկ. 12), ամենայն հավանականությամբ, միևնույն վարպետի ձեռքի աշխատանք են. ունեն նույնանման հորինվածքային լուծումներ և գրեթե հավասար չափեր՝ 64×110 սմ և 56×100 սմ:

3-րդ տիպ: X դ. վերջում խաչքարի հորինվածքն ու հարդարանքը զարգացում են ապրում: Պարզ ու անմշակ խաչքարերը փոխարինվում են օրինակներով, որոնց ստորին հատվածում ավելանում է արմավազարդը, իսկ խաչի վերին հատվածում՝ խաղողի ողկույզները: Նման զարգացումը չի շրջանցել նաև Մաքրավանքը (նկ. 14): Հետաքրքրական է, որ նմանատիպ նմուշներ կան նաև Հրազդանի տարածաշրջանի այլ վայրերում՝ Մեղրաձորում, Զրառատում (նկ. 15), Լեռնանիստում (նկ. 16): Մաքրավանքի նշյալ խաչքարի հորինվածքը գրեթե նույնությամբ կրկնվում է Գեղարքունիքի մարզի Զորագյուղ բնակավայրի Մասրուց անապատ համալիրում գտնվող 976 թ. (նկ. 18), ինչպես նաև տարածաշրջանի մեկ այլ բնակավայրում՝ Ծաղկաձորում՝ Կեչառիս վանական համալիրում (նկ. 17) գտնվող աշխատանքներում:

Երրորդ շարքի ստեղծագործությունները հորինվածքի բովանդակության և քարի մշակվածության առումով կարծես հիմք են նախապատրաստում խաչքարերի հետագա զարգացման, իսկ XII-XIII դդ.՝ առավելապես բազմազանության և կատարելագործման համար: Պատահական չէ, որ Համլետ Պետրոսյանը, խոսելով այս հորինվածքի խաչքարերի մասին, նշում է, որ ուղղանկյուն սալի տեսք ունեցող կլորացող վերնամասով այս խաչքարերի վերնամասը կամարակերպ ձևավորելը նպատակ ուներ ապահովելու խաչի խորանացված-սրբազանացված ընկալումը, որն էլ իր հերթին, կարող էր արտահայտել խաչի երկնային-տիեզերական ոլորտում գտնվելու և գործելու գաղափարը: Ըստ Պետրոսյանի՝ «նման եզրահանգումն ավելի համոզիչ է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ X դ.

սկսած արդեն ուղղանկյուն վերնամասով սալի վրա ստեղծում են հատուկ քանդակային կամարներ՝ ապահովելու խաչի՝ խորանի մեջ գտնվելու տպավորությունը»¹¹:

Խաչքարերի թվի և ձևերի բազմազանության առումով բավական բարդ ժամանակահատված է XI դ.: Նախ, այս ժամանակ խաչքարային արվեստն անհամաչափ է զարգանում: Մյուս կողմից՝ XI դ. և ընդհուպ մինչև XII դ. առաջին կեսը, որպես հետևանք սելջուկների արշավանքների և դրանց հետևած տիրապետության, մշակույթի անկման պայմաններում ավելի քիչ խաչքարեր են կանգնեցվում, նկատվում է վերադարձ դեպի հին և պարզունակ տեսակները¹²: Ուստի, պետք է զգույշ խոսել այս շրջանի խաչքարերի հստակ թվագրության մասին: Հետևաբար նախընտրելի է XI դ. աշխատանքների նմանություն ունեցող խաչքարերը պարզապես դասել X-XI դդ. խմբին: Միևնույն ժամանակ, XI դ. հետ է կապվում բազմաթիվ վայրերում «Անիական ոճի» խաչքարերի տարածումը: Սրանք, ի տարբերություն համաժամանակյա այլ աշխատանքների, արված են կատարողական բարձր վարպետությամբ: Նշվածը չի շրջանցել նաև Մաքրավանքը, սակայն նորահայտ խաչքարերի մեջ կարծես այդպիսիք չկան. Մաքրավանքում անիական ոճի է 1039 թ. խաչքարը (նկ. 19), որին մենք հանգամանալից անդրադաձել ենք նախկինում¹³:

Եզրակացություններ

Այսպիսով, փորձեցինք վերհանել Մաքրավանքի IX-XI նորահայտ խաչքարերի առանձնահատկությունները՝ դրանք դիտարկելով Մաքրավանքի և հարակից շրջանների համաժամանակյա մյուս խաչքարերի զարգացման համատեքստում: Նորահայտ խաչքարերը կրում են ինչպես խաչքարային արվեստի զարգացման ընդհանուր օրինաչափություններ, այնպես էլ որոշակի տեղային առանձնահատկություններ, որոնք էլ հիմք են նախապատրաստում XII-XIII դդ խաչքարերի «հրազդանյան տիպ»-ի երևան գալու համար:

¹¹ Հ. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը...*, էջ 85-86:

¹² Նույն տեղում, էջ 111:

¹³ Գ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 159-161:

AVETIS GRIGORYAN, GEGHAM ASATRYAN

**NEW-FOUND KHACH‘K‘ARS FROM MAK‘RAVANK‘
(IX-XI CENTURIES)**

Keywords: Mak‘ravank‘, excavations, courtyard, newly discovered khach‘k‘ars, early period, IX-XI centuries.

The article presents the peculiarities of the IX-XI centuries khach‘k‘ars excavated in 2018 in Mak‘ravank‘. The newly discovered khach‘k‘ars are conditionally divided into three groups: those with simple composition, elaborated ones and examples enriched with plant elements. The newly discovered khach‘k‘ars are characterized not only by the common patterns of the khach‘k‘ar art but also by some local features which became apparent since the XII century. The study of the newly discovered khach‘k‘ars arouses some difficulties because of the lack of dated inscriptions and less prominent formal peculiarities.

АВETИС ГРИГОРЯН, ГЕГАМ АСАТРЯН

**НОВОНАЙДЕННЫЕ ХАЧКАРЫ ИЗ МАКРАВАНКА
(IX-XI ВЕКА)**

Ключевые слова: Макраванк, раскопки, притвор, новонайденные хачкары, ранний период, IX-XI вв.

В статье представлены особенности хачкаров IX-XI веков, найденных в 2018 при раскопках в Макраванкском монастырском комплексе. Новонайденные хачкары условно разделены на три группы: с простой композицией, усложненной и обогащенной растительными элементами. Недавно обнаруженным хачкарам свойственны не только общие закономерности развития искусства хачкаров, но также некоторые местные черты, проявившиеся с XII века. Изучение новонайденных хачкаров сопряжено с некоторыми трудностями, из-за отсутствия датированных надписей и менее выраженных формальных особенностей.